## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

11 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 11-Ա

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասին, «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասին և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-րդ կետին համապատասխան՝

Ո Ր Ո Շ Ու Մ  Ե Մ

1. 2020 թվականի ապրիլի 5-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի անցկացման համար Լոռու մարզի Շահումյան համայնքի տարածքում տեղամասային կենտրոն սահմանել ,,Շահումյանի կրթամարզամշակութային համալիր,, ՀՈԱԿ-ի շենքը (հասցեն՝ 1-ին փողոց, 4 փկղ. շենք 2):

2. Սույն որոշման մասին տեղեկացնել՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տարածքային ստորաբաժանմանը, թիվ 24 տարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին:

Համայնքի ղեկավար՝ ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2020թ. փետրվարի 11
գ.Շահումյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք

ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 12-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐԸ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասին, «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին համապատասխան՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ    Ե Մ

2020 թվականի ապրիլի 5-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեին «ԱՅՈ» և «ՈՉ» քարոզչության կողմերի կողմից քարոզչական պաստառներ փակցնելու համար համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

1) Շահումյանի ,,Կրթամարզամշակութային համալիրի,, մանկապարտեզի շենք, գ. Շահումյան, 1 փող. 59 շենք, 20 ք.մ.:

2) Շահումյանի ,,Առողջության առաջնային պահպանման կենտրոն,, ՊՈԱԿ-ի շենք, գ. Շահումյան 1 փող. 8, 16 ք.մ.:

**Համայնքի ղեկավար՝** **ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2020թ. փետրվարի 11
գ.Շահումյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

11 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 13-Ա

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐԹՈՒՐ ՄԵԼԻՔԲԵԿՅԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Շահումյան համայնքի ավագանու 27.11.2019թ-ի թիվ 42-Ն որոշմամբ, հաշվի առնելով անհատ ձեռնարկատեր Արթուր Մելիքբեկյանի 11.02.2020թ-ի հայտը՝

Ո Ր Ո Շ Ու Մ  Ե Մ

1. Բավարարել Շահումյան համայնքի Դիլիջան մայրուղի 2 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Արթուր Մելիքբեկյանի /պետական գրանցման վկայական 01 Ա 092818/ հայտը և նրան տալ հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Մելինե Խաչատրյանին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:

**Համայնքի ղեկավար՝** **ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2020թ. փետրվարի 11
գ.Շահումյան